«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2018 թվականի

«Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները»** հարցը (զեկուցող՝ արտաքին կապերի բաժնի պետ Վ.Ա.Ղուկասյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. բուհերի միջազգայնացումը բարձրագույն ուսումնական հաստատությունների զարգացման ռազմավարությունների կարևոր բաղադրիչներից մեկն է: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային գործունեությունն իրականացվում է բուհի 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի համաձայն: Համալսարանի միջազգային գործունեության հիմնական ուղղություններն ու ցուցանիշներն են՝

1) ուսանողների փոխանակում,
2) դասախոսների փոխանակում,
3) օտար լեզվով դասավանդվող մասնագիտությունների թիվ,
4) օտարերկրյա ուսանողների թիվ,
5) դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն:

Համալսարանում իրականացվող ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների փոխանակումը հիմնականում կատարվում է Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություն 1-ի շրջանակներում:

Ուսանողների փոխանակում

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ից գործընկեր բուհեր է գործուղվել 31 ուսանող (24 բակալավր, 7 մագիստրանտ): Ըստ ֆակուլտետների ուսանողների բաշխվածությունն է. կառավարման ֆակուլտետ՝ 8 ուսանող, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ՝ 5 ուսանող, ֆինանսական ֆակուլտետ՝ 9 ուսանող, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ՝ 1 ուսանող, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ՝ 6 ուսանող, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ՝ 3 ուսանող, Գյումրու մասնաճյուղ՝ 1 ուսանող:

Համալսարանում մեկ կիսամյակ ժամանակահատվածով միջբուհական համագործակցության շրջանակներում հյուրընկալվել է 2 ուսանող՝ կառավարման ու հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետներում:

Դասախոսների փոխանակում

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ից գործընկեր բուհեր է գործուղվել 18 դասախոս: Բուհի թողարկող ամբիոններից ծրագրին մասնակցել է 10 ամբիոն, որից առավել ակտիվ են եղել միջազգային տնտեսական հարաբերությունների և տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնները: 7 թողարկող ամբիոնների դասախոսներից որևէ մեկը ծրագրի չի մասնակցել:

Մինչև 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտը պլանավորված է իրականացնել 4 դասախոսի փոխանակում:

Համալսարանում 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում մեկշաբաթյա դասախոսություններով հանդես է եկել 16 դասախոս:

Վարչական աշխատակիցների փոխանակում

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ից գործընկեր բուհեր է գործուղվել 13 վարչական աշխատակից:

Մինչև 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտը պլանավորված է իրականացնել 10 վարչական աշխատակցի փոխանակում:

Համալսարանում 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում մեկշաբաթյա վերապատրաստման է մասնակցել 5 վարչական աշխատակից: Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՊՏՀ-ն առաջին բուհն է Հայաստանում, որը կազմակերպում է միջազգային վերապատրաստման շաբաթ գործընկեր բուհերի դասախոսների և վարչական աշխատակիցների համար:

Օտար լեզվով դասավանդվող մասնագիտություններ

Համալսարանը 2012 թվականից ի վեր իրականացնում է օտարերկրյա քաղաքացիների կրթություն: 2017 թվականի ապրիլին կնքվել է միջհամալսարանական համագործակցության եռակողմ համաձայնագիր Եվրոպական միության «Էրազմուս+» (HERITAG) ծրագրի գործընկերներ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ) և Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանի (ՎՊՀ) հետ: Այնուհետև՝ հունիսին մեր բուհը և ՃՇՀԱՀ-ը ստորագրել են համագործակցության երկկողմ պայմանագիր, իսկ սեպտեմբերին կնքել են «Նախագծերի կառավարում» մագիստրոսական համատեղ կրթական ծրագրի իրականացման համաձայնագիր: 2017 թ. մայիսի 25-ին ՀՊՏՀ-ի և Շվեյցարիայի ՈՒՄԵՖ համալսարանի միջև կնքվել է կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրի իրականացման համաձայնագիր, ըստ որի ձևավորվել են գործարար

կառավարման (MBA) և գործադիր կառավարման (EMBA) մագիստրոսական խմբեր: Բոլոր դասընթացներն անցկացվում են անգլերենով՝ եվրոպական երկրներից, ԱՄՆ-ից, Կանադայից և այլ երկրներից ժամանած պրոֆեսորադասախոսական կազմի կողմից:

Այս պահին համալսարանը օտարերկրյա ուսանողների համար անգլերենով առաջարկում է «Գործարար կառավարում» մասնագիտությունը:

Օտարերկրյա ուսանողներ

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում նոր ուսանողների ընդունելություն չի իրականացվել: Համալսարանի ակտիվ մասնակցությամբ նախորդ տարի Հայաստանի պետական բուհերի ռեկտորների խորհուրդը հայաստանյան 8 բուհերի, այդ թվում՝ ՀՊՏՀ-ի անունից, համագործակցության հուշագիր է ստորագրել Հնդկաստանի Հանրապետությունում գործող «Սանտա Մոնիկա. կրթություն արտերկրում» կազմակերպության հետ: Համաձայն պայմանավորվածության՝ այս պահին նշված կազմակերպությունը Հնդկաստանում իրականացնում է գովազդ և ուսանողների հավաքագրում:

Դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն

Համալսարանն ընդգրկված է մի շարք դրամաշնորհային ծրագրերում, որոնցից 3-ը համակարգում է արտաքին կապերի բաժինը.

Ֆինանսների մագիստրոսական ծրագրերի բարեփոխում Հայաստանում և Մոլդովայում (ՐԻՖԱՅՆ) REFINE

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է € 615'507.00,

ՀՊՏՀ-ի բյուջեն՝ € 65'743.00:

eDrone

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է € 995'412.00,

ՀՊՏՀ-ի բյուջեն՝ € 37'391.00:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ երիտասարդների ձեռներեցության համար

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է € 49'188.00,

ՀՊՏՀ-ի բյուջեն՝ € 7'995.00:

Արձանագրված խնդիրներ

1. Ամբիոնների կողմից դրամաշնորհային ծրագրերին դիմելու ընթացքում ցուցաբերած պասիվություն:
2. Դասախոսների շրջանում օտար լեզվի մակարդակի ոչ բավարար իմացություն:
3. Փոխանակման ծրագրերին մասնակցող դասախոսների և վարչական աշխատակիցների նախաձեռնողականության բացակայություն:
4. ՀՊՏՀ ժամանող օտարերկրյա դասախոսների դասապրոցեսի կազմակերպում:

5. Օտարերկրյա ուսանողների ներգրավման դժվարություններ՝ հիմանականում պայմանավորված դիպլոմի փոխճանաչման խնդիրներով:
6. Վարկանշավորման աղյուսակներում ՀՊՏՀ-ի ոչ բարենպաստ դիրք՝ պայմանավորված միջազգային ամսագրերում հոդվածների ոչ բավարար մակարդակով:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային գործունեության վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել արտաքին կապերի բաժնին՝**
   1) ընդլայնել ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների փոխանակման ծրագրերի աշխարհագրությունն ու գործընկեր բուհերի քանակը,
   2) օտարերկրյա ուսանողների ներգրավման ուղղությամբ խորացնել համագործակցությունը արտերկրի ուսանողների ներգրավման գործակալությունների հետ,
   3) աշխատանքներ իրականացնել և ՀՀ ԿԳՆ-ից ստանալ թույլտվություն ռուսերենով ևս ուսուցում կազմակերպելու նպատակով,
   4) շարունակել ընդլայնել միջբուհական համագործակցությունը,
   5) նախադրյալներ ստեղծել համատեղ կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ,
   6) ապահովել համալսարանի անունից դրամաշնորհային նոր ծրագրերին դիմելու գործընթացում համապատասխան ամբիոնների և ստորաբաժանումների ներգրավվածությունը:

3. **Հանձնարարել թողարկող ամբիոններին՝**
   1) արտաքին կապերի բաժնի հետ համատեղ օտարերկրյա ուսանողների համար մշակել մագիստրոսական նոր ծրագրեր,
   2) ակտիվորեն մասնակցել դրամաշնորհային ծրագրերի հայտերի ներկայացման գործընթացին՝ տարեկան ներկայացնելով առնվազն մեկ դիմում-հայտ:

4. **Հանձնարարել կարիերայի և մարքեթինգի կենտրոնին, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝**
   1) նկարահանել բուհի մասին պատմող եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) տեսահոլովակ՝ օտարալեզու հոլովակները օտարերկրյա դիմորդների շրջանում տարածելու նպատակով,
   2) ապահովել համալսարանի մասին պատմող եռալեզու բուկլետի մշտական թարմացումը:

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ռեկտոր Կ.Լ.Աթոյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

2018 թ. Հունիսի 29
Երևան